մաց, զ՞ինչ արասցուք. ասաց հրապարակաւ՝ թէ ըստ իմ կտակիս եթէ ոչ կամեսցին լինել զիսահակ Վրդ.պան Կաթուղիկոս, միաբանեալք առանց խռովութեան, զով ոք կամին՝ ընտրեալ դիցեն յԱթոռն, զի մի յաղագս երկպառակութեան աւերեսցի սբ. Տունն. եւ յանձն արար Տեառնդ Վեհի եւ Մարտիրոս Վրդ.պտին հոգալ զայս: Դարձեալ կրկին անգամ հարցաք սբ. Հօրն՝ եթէ այս պարտուցս բաղմութեան զի՞նչ ապասցուք, ո՞վ տացէ պատասխանի: Քանզի որքան եկն ի քաղաքն վեց անգամ սիւնհոդոս արար եւ ոչ կարաց պարզել զհիսապն, որ ընդ Խոսրովին, թէպէտ կամէր վրէժխնդիր լինել նմա սաստիկ, սակայն Մարտիրոս Վրդ.պան չէր ի միջի եւ չունէր զոք ընկեր, վասն այնորիկ օր աւուր յամելով մնաց հիսապն անկատար: Դարձեալ Վանցի Նիկողոս չերէց ոմն, զոր վէքիլ եղեալ Ստեփաննոս Վրդ.պտին Մեղրեցւոյ՝ մինչ պատրիարգ էր աստ, թէ քիսայի հիսապ ունելով յայնժամ, զոր վճարեաց Հոգեւոր Տէրն. իսկ այժմ դարձեալ կրկին դաւէ արար՝ չկարաց հախ անել Վեհին վերայ, յերկարեցաւ դաւէն մինչեւ ցայսօր: Իսկ յաւուր Կիրակէին, զոր ի վաղուն աւանդելոց էր զքաղցր հոգին, յորդորեալ զտաճիկ դաւէճիսն, եկեալ ի վերայ սաստիկ հիւանդութեանն, կամէին մահճօք վերցնել ի մէհկէմէն: Եւ թէ զինչ չարիք գործեաց յայնմ ժամու՝ ընդ գրով ոչ լինի արկանել, զոր յայնմ սաստիկ հիւանդութեանն չարաչար նզովիւք բանադրեաց զչարն զայն. եւ